*Հավելված 1*

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1.

### « Ոչ ֆորմալ կրթական ծառայություններ Ախուրյան խոշորացված 3 բնակավայրերի 6-18տ երեխաների համար »

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Ստեղծել և մատուցել ոչ ֆորմալ կրթական ծառայություններ Ախուրյան խոշորացված համայնքի 3 բնակավայրերի 6-18տ 350 երեխաների համար | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 350 | 350 | 350 | 400 | 400 |
| | 1. Կենտրոնում ուսուցանվող խմբերի թիվ | | | | | |
| | խմբերի թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| | 2. Կենտրոն հաճախող երեխաների առաջադիմության մակարդակ | | | | | |
| | Առաջադիմության մակարդակի աճ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 60% | 60% | 60% | 60% | 60% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Համապատասխան տարածքի վերակառուցում կամ վերանորոգում<br>1.2 Տարածքի կահավորում, գույքի տեխնիկայի ձեռքբերում<br>1.3 Համապատասխան մասնագետների պատրաստում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Կրթական մոդուլների և ամսեկան պլանների մշակում<br>2.2 Երեխաների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում և խմբերի ձևավորում<br>2.3 Համայնքում սպորտ հրապարակի ստեղծում<br>2.4 Բացում և գործարկում | | | | | |
| Ծրագրի բյուջեն | 10 մլն դրամ | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, կրթական ծառայության մասնագետներ | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Երեխաների ներգրավումը գյուղատնտեսական աշխատանքներում, կրթության հանդեպ հետաքրքրվածության ցածր մակարդակ |
| Ծրագրի հիմնական շահառուները | 6-18տ երեխաներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս բնակավայրերի դպրոցներ հաճախում են 460 երեխաներ, որոնց համար չկան արտադպրացական, ոչ ֆորմալ կրթության ծառայություններ:<br>Երեխաները զրկված են իրենց հմտությունները զարգացնելու հնարավորությունից, ունեն հասարակական քաղաքացիական կյանքում ցածր մասնակցություն և սոցիալականացման դժվարություններ:<br>Արտադպրոցական ծառայությունների քիչ հասանելիությունը դժվարություններ է ստեղծում նաև այս խմբերի երեխաների ծնողների համար: Շատ դեպքերում ծնողները դժվարանում են ապահովել երեխաների ընդգրկվածությունը արտադպրոցական կրթության մեջ՝ հաշվի առնելով , որ ծառայությունները տեղակայված են այլ համայնքներում, օրինակ՝ Գյումրիում, ինչը պահանջում է հավելյալ ֆինանսական ծախսեր տրանսպորտի վրա:<br>Ծրագրով նախատեսվում է ծառայություններ առավել հասանելի դարձնել Ախուրյան համայնքի բնակիչների համար, դրանք տեղակայելով Մարմաշեն, Վահրամաբերդ և Կապս բնակավայրերում: Այս ծառայությունները հասանելի կլինեն նաև հարակից բնակավայրերի երեխաների համար: |